հարցին, թե ինչո՞ւ է հանվել վերոնշյալ նոմինացիան, նախարարության երիտասարդության քաղաքականության վարչության պետ Արսեն Սողոմոնյանը պատասխանեց, որ շարադրության մրցույթներ հանրապետությունում բավականին շատ են անցկացվում. *«Մենք փորձել ենք չկրկնվել»:*

Լ. ՕՀԱՆՅԱՆ

րելով: Գյուղատնտեսարանն էլ իր ներդրումն է ունեցել ջրի հարցը լուծելու խնդրում, բայց, ինչպես ականատես եղանք, ջրի հարցը չի լուծվել եւ չի դադարում տեղաբնակների՝ դույլերով ջուր կրելու «գործընթացը»: Ինչ վերաբերում է գյուղատնտեսարանի շենքի երկրորդ հարկում ծվարած մշակույթի տանը, դա այլեւս փլատակ է:



*Գրադարանը հարուստ է խիստ արդիական գրականությամբ:*



*Գյուղատնտեսարանի առաջին հարկի միջանցքը:*

Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ, լուսանկարները՝ Գ. ՇԱՄՇՅԱՆԻ

# Բարրոկոյից մինչեւ մոդեռն

*«Նարեկացի» արվեստի միությունում նոյեմբերի 14-17-ը կկայանա դասական երաժշտության փառատոն՝ «Ժամանակի գույնը» խորագրով:*

Միջոցառման կազմակերպիչները երիտասարդ արվեստագետներ՝ թավջութակահար **Սամսոն Թաթոսյանը**, ջութակահար **Ռուբեն Կոսեմյանը** եւ կոմպոզիտոր, դաշնակահար **Հովհաննես Մանուկյանն** են: Ընդ որում, փառատոնի խորագիրը Հովհաննեսի մտահղացումն է. *«Յուրաքանչյուր ժամանակ իր ուրույն երանգն ունի, չնայած հավիտենական ասված ժամանակի գույնը անփոփոխ է: Փորձել ենք ժամանակը ներկայացնել երաժշտության տեսքով»:*

Ռ. Կոսեմյանը պատմեց, որ փառատոնի կազմակերպման միտքը հանկարծակի է հղացել. *«Երբ Մոսկվայում 7 տարի ապրելուց հետո Սամսոնը վերադարձավ Հայաստան, միանալով իրեն, համերգներով հանդես եկանք Երեւանում եւ մարզերում»:* Սամսոնն էլ հիշեց. *«Ժամանակին, երբ Հայաստանում էի ու ինձ քչերն էին ճանաչում, դարձյալ համերգներ էի կազմակերպում, բայց կարծես հանդիսատեսին այդքան էլ չէին հետաքրքրում դրանք: Իսկ հիմա, Կապանում ու Չարենցավանում համերգներ կազմակերպելուց հետո նկատեցինք, որ ի տարբերություն 90-ականների, հանդիսատեսի թիվը անհամեմատ ավելացել է: Ուրախալի է, որ այսօր դասական երաժշտության երեկոներին հաճախում են նաեւ երիտասարդները: Սակայն մի բայց կա: Օրինակ, համերգներին սպորտային հագուստով հաճախողները, չգիտես ինչու, դիմելով մեզ՝ կարծես արդարանում էին. «Ախպերս, կներես, մենք էս երաժշտությունը սիրում ենք ու հասկանում: Գիտենք, որ էս տեսքով չպիտի ներկայանանք, բայց ժամանակ չունեինք փոխվելու»:* Շարունակելով միտքը՝ նա ավելացրեց. *«Հայ հանդիսատեսի ընդունելությունը ինձ համար այլ արժեք ունի: Չեմ կարող ասել, որ ռուսները հայերից պակաս են սիրում կամ ընկալում դասական երաժշտությունը, բայց հայկական դահլիճներում այլ ջերմության եմ հանդիպում, չի բացառվում, որ առաջին հերթին դա կապվում է արյան կանչի հետ: Բացի այդ, Ռուսաստանում, եթե ռուս չես՝ բարձունքի հասնելն էլ ավելի է դժվարանում: Ինչը չեմ նկատել Հայաստանում: Մենք իրոք հյուրընկալ ազգ ենք: Դրսից եկած շարքային արվեստագետին անգամ գրկաբաց ենք ընդունում»:* Ընկերոջ ասածին հակադրվեց Ռուբենը. *«Մեզ մոտ հյուրերին շատ ավելի ենք տեղ տալիս, քան մեր տաղանդավորներին: Դրանից հաստատ տուժում ենք, թեպետ դրսում վաղուց արդեն հյուրընկալի դրական պիտակն ունենք»:* Հովհաննեսն էլ փաստեց, որ դասական երաժշտությունը ի զորու է 20 տոկոսով զարգացնել մարդու ինտելեկտը. *«Հավանաբար նախկինում հենց դա էին հաշվի առնում կոմունիստները, որ մարդկանց ստիպում ու պարտադրում էին հաճախել դասական երաժշտության համերգների»:*



*Երիտասարդ արվեստագետները, ի տարբերություն իրենց որոշ գործընկերների, որոշեցին փառատոնն անցկացնել ոչ թե Մոսկվայում, այլ՝ Երեւանում:*

Երիտասարդները մտադիր են փառատոնի հաջողության դեպքում այն դարձնել միջազգային: *«Օրագրել էինք, որ նմանատիպ մի փառատոն էլ կարելի է Մոսկվայում կազմակերպել, բայց հաշվի առնելով, որ կրիմինալը ակտիվացել է ՌԴ-ում՝ մեծ թվով երիտասարդների Մոսկվայում հավաքելը իրոք պատասխանատվության առաջ կարող էր մեզ կանգնեցնել»:* Սամսոնն էլ պլաններ ունի՝ կապված Հայաստանում դասական երաժշտության մենեջերական կենտրոն հիմնելու հետ, սակայն դրա համար մեծ գումար է պետք. *«Շատ լավ կլիներ, որ գտնվեր մեկը, ով համերգներ կազմակերպեր, օգներ CD-ներ թողարկել, հրացնել եւ այլն»:* Ռուբենի կարծիքով էլ՝ Հայաստանում հիմա յուրաքանչյուր արվեստագետ ինքն է իր մենեջերը, թեեւ *«Մոսկվայում էլ դեռ բաց է մնում այս խնդիրը, ի տարբերություն քաղաքակիրթ երկրների, որտեղ ոչ մի արվեստագետ կազմակերպչական հարցերով չի մտահոգվում»:*

ԼՈՒՍԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

## ԵՐԳԻՉԸ ՄՆԱՑԵԼ Է ԱՌԱՆՑ ՏԱՆԻՔԻ



«Առավոտի» ուշադրությունը գրավեց Շենգավիթ համայնքի Սեւանի փողոցում գտնվող Գեորգի Սարկիսովի «տունը» (լուսանկարում): Նա արմատներով Ղարաբաղից է, ծնունդով՝ Գրոզնիից: 1968թ. սովորել է Երեւանի պետկոնսերվատորիայում, Տաթեւիկ Սազանդարյանի դասարանում, այնուհետեւ ուսուցանել Պավել Լիսիցյանի մոտ: 1973-ին, ժամանակին հայտնի Օրբելյանի նվագախմբի հետ, վոկալիստը մեկնել է հյուրախաղերի: Նշենք, որ 1968-71թթ. ապրել է Ջեյթունի հանրակացարանում, այնուհետեւ մոր մահվան կապակցությամբ մեկնել է Գրոզնի, վերադարձել 1980-ին եւ մինչեւ 2001-ը բնակվել է Երեւանի փորձարարական կոնստրուկտորական բյուրոյի հանրակացարանում: Գ. Սարկիսովի փոխանցմամբ, հանրակացարանի տնօրենը վաճառել է իր մեկ սենյակը եւ իրեն թողել դրսում: Ընդ որում, նա հավաստիացնում է, որ ունի նույնիսկ սենյակի օրդեր. *«Տնօրենի գիտությամբ սենյակս վաճառվել է ոմն Մաքսիմի եւ մինչ օրս ինձ արգելում են ներս մտնել»:* Հարցին՝ իսկ մինչ օրս բաց երկնքի տակ բնակվողից ոչ մեկը չի՞ նկատել, Գ. Սարկիսովը պատասխանեց. *«Ինձ նույնիսկ այստեղից են վռնդում»:*

Ս. Դ.